

HOLY CROSS ARMENIAN DAY SCHOOL  
P.O. Box 2387, STATION "C"  
DOWNSVIEW, ONTARIO. M3N 2V8

ՍՈՒՐԲ ԽԱԶ ԱԶԴԱՅԻՆ ԱՄԵՆՈՐԵԱՅ ՎԱՐԺՄԱՆ  
ԹՈՐՈՒԹՅՈՒՆ

ԾՐ Ձ Ա Բ Ե Ը Ր Ա Կ Ա Յ Ա Ն

Սրտի անհուն գոհունակութեամբ կուզանք յայտարարել թէ, վերջին երկու տասնամեակներուս կրնանք ըսել անխափի ամէն թորոնիօյ արնակ հայու երազը եղող ամենօրեայ հայ վարժարանի գաղափարը; բուռ մը հայ անձնուէր ազգայիններու ջանքերով այսօր իրազործուած է: Դպրոցը կնքուած է ՍՈՒՐԲ ԽԱԶ ԱԶԴԱՅԻՆ ԱՄԵՆՈՐԵԱՅ ՎԱՐԺՄԱՆ անունով: Բացման նուականը ճշգուած է Սեպտեմբեր 18-ի գուզադիպող երկուշաբթի օրը:

Դպրոցս հայ ծնողէ սերած կամ միայն մէկ շառաւիղի կողմէ չայ ծագում ունեցող եւ կամ աւելի հեռաւոր ազգականական կավերով հայ իրականութեան հետ առնչութիւն ունեցող ամէն Դանաշացի եւ կամ Գանցուայի մէջ օրինապէս ընակութիւն հաստատած տղոց համար բացուած է: Ան պիտի ունենայ առայ մմ Մանկապարտէզի երկու եւ նախակրթարանի Առաջին դասարանները եւ պիտի առաջադրէ ամէն յջորդող տարիններուն մէկ դասարան եւս աւելցնել իր կարգերուն վրայ հասնելու մինչեւ վեցերորդ դասարան: Ոչ մէկ յարանուանական, հատուածական, կուսակցական կամ աշխարհահայեցողութեան ապրելուն կրնան պատուար հանդիսանալ աշակերտներուն դպրոցի շարքերուն մէջ ընդունուելուն:

Դպրոցիս մէջ պիտի կիրարկուի Օնթարիոյի Կրթական նախարարութեան սահմանած ուսումնական ծրագիրը եւ դասաւանդութիւնները մշտնջենական կերպով պետական հակակշռին ենթակայ պիտի մնան: Մեր նպատակն է հայ մանուկներուն ուսուցանել զանազան գիտելիքներու, Անգլերէնի եւ ֆրանսերէնի առընթեր, նաև ի մավաւորի իրենց մայրենի լեզուն եւ գրականութիւնը, տալ իրենց ըրիստոնէական դաստիարակութիւն, աւանդել իրենց հայոց գաղտնութիւնը, բացառիկ բծախնդրութիւն ցոյ տալով որ մեր պատմութիւնը, մասնաւորաբար ինչ որ կը վերաբերի իր նորագոյն շրջաններուն, աւանդուի իրենց առանց ռեւէ մեկ կուսակցական եւ կամ այլ աշխարհահայեցողութեան ազդեցութեամբ երանգաւորուած ըլլալու, այլ իր հարազատ եւ սոսկական իրականութեանը մէջ ու բացարձակապէս անկողմնակալօրէն: Մէկ խօսքով ամէն ջանք պիտի թափուի որ հայու զաւակը, կրթեալ, լաւ պատրաստուած եւ շնորհալի գանատացի մը ըլլալու առընթեր, պահենք իբր հայ իր ամբողջական առումուլը, իր կեանքի առաջին եւ ամենակարեւոր տասնամեակին տեւողութեանը եւ անոր ջամբենը գիտակցութիւնը, սէրն ու յարգանը հանդէպ իր ազգային ծագումին: Երբ մեզի զօրավիզ կանգնիր որ այս կարեւոր հիմը դնենք, այնուհետեւ ծնողները ազատ են անշուշտ, համաձայն իրենց անձնական նախասիրութեանց եւ համոզումներուն, շարունակել տալ իրենց զաւակներուն հայեցի դաստիարակութիւնը մինչ այդ, առաջ Աստուած, կազմակերպուած այլ հայկական հաստատութիւններու մականին ներքեւ:

Ուստի, վարժարանս կոչ կ' ընէ ծեզմէ իւրաքանչիւրիդ, ամէն մէկուղ անխափի որ ինքզինը չայ կը կոչէ կամ գէթ ղեռ կը յիշէ թէ իր հայ մօրկանը կամ իմած է, առանց որ կաշկանդուած զգաք եթէ ծեր առաջին սկարտաւորութիւնը մի զուցէ ըլլայ ի նպաստ ծեր պատկանած այս կամ այն կազմակերպութեան եւ կամ կուսակցութեան հոլանդարած ծեռնարկին, նաև բաջալեր հանդիսանալ այս դպրոցին որ մեզի պիտի տայ յառաջիկայ վեց տարիններուն հետզ հետէ ընդարձակածաւալ զետին մը, ծաւալուն խարիսխներ,

որոնց վրայ այլ կազմակերպութիւններ պիտի կրնան հիմնել իրենց կոնֆոդները:  
 Այս կարժարանը պիտի ըլլայ ծեզմէ իւրաքանչիւրիդ, որ ըսնէ է ըուլոր նորոնթօ-  
 հայութեան սեպհականութիւնը, եւ անոր հասցուցած հունծքնը, ծեր առաջայ  
 ցանկութեանց եւ ծրագիրներուն ատաղձը պիտի կազմեն: Որով մենք կ' ազաւինինք  
 մեզի համար մեծ արժէք ներկայ ացնող ծեր բարոյական խրախոյսին առընթեր նաեւ  
 ծեզմէ իւրաքանչիւրիդ պիւտմէին ներած առաւելազոյն չափով նիւթական սրտաբուխ  
 նուիրատուութիւններուն: Այսու հանդերձ, մեծատուններու իշխանական  
 նուիրատուութիւններու հետ միասին կ' ընդունինք նաեւ այրի կնոջ լուման,  
 հոգեկան նոյն յուզումներով: Երբ այսպիսով մենք մեզի կարենանք օգնել  
 նկատելի չափով մը, մենք ամէն ջանք պիտի չխնայենք առաջնովելու ուրիշ բարե-  
 սիրտ նուիրատուններ, դիմելով հայ եւ օտար բարենպատակ կազմակերպութիւններու  
 եւ հաստատութիւններու, յանձանցելու համար այս շատ դժուարին եւ սակայն  
 ըուլոր հայերուս սրտին խօսող հայ ամենօրեայ դպրոցի կարիքները: Հանգանակիչ  
 մարմնի ներկայ ացուցիչներ պիտի մօտենան ծեզի այս օրերուս: Կը ինդրենք  
 ի սրտէ եւ կոչ կ' ընենք անզամ մը եւս ծեր ազգասիրութեան, քաջալերելու  
 իրենց ջանքերը ծեր առատաբուխ նուիրատուութիւններով:

Կեցցէ Հայ Ազգը յաւիտեան:

Ի դիմաց՝

ՍՈՒՐԲ ԽԱՉ ԱԶԴԱՅԻՆ ԱՄԵՆՅՈՐԻՆԻՑ ՎԱՐԺՄԱՆԻ  
 ՀՈԳԱՅԱՐԾՈՒՅԻՆԻՆ

Առենապետ  
 Տօրի. Նուպար Ալեանար

Օգոստոս 30, 1978